**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18


ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

**N 144 -11**
***20 սեպտեմբեր 2011թ.***

*Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 19.09.2011թ. թիվ 8-Ա հրամանի և համայնքի ավագանու 15.09.2011թ. թիվ 20-Ա որոշման մեկական օրինակները:*

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ


Կատ. Աննա Բարոյան
0 254 6 02 17, 0 254 6 02 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

15/09/2011

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԿՑԱԳՐՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԻՑ ՈՐՊԵՍ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սարչապետ համայնքի բյուջեի <Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն> 9.2.2 ծրագրի 4637 հոդվածից 500.0 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխանցել Սարչապետի միջնակարգ դպրոցին դասագրքերի ձեռքբերման համար:

2. Սարչապետ համայնքի 1996 թ. ծնված պատանիներին /ութ անձ/ Տաշիրի զինվորական կոմիսարիատ կցագրում անցնելու նպատակով համայնքի բյուջեի սոցիալական ֆոնդից որպես ճանապարհածախս տրամադրել յուրաքանչյուրին 500-ական ՀՀ դրամ: Ընդամենը՝ 4 000 /չորս հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ [illegible]

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**Հ Ր Ա Մ Ա Ն ԹԻՎ 8-Ա**

*19 սեպտեմբեր 2011թ.*

# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով.

***Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝***

Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիրը՝ 2.3-1/ Հրաչիկ Առաքելյանին որպես խրախուսանք տալ միանվագ դրամական պարգևատրություն՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝* *ԱՆՆԱ ԲԱՐՈՅԱՆ*